# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**հրավերում փոփոխություններ կատարելու մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2024 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 2 արձանագրությամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/134**

Մեծամորի համայնքապետարանի կարիքների համար «Բամբակաշատ գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ջեռուցման համակարգի իրականացման և մասնակի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/134 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

**Փոփոխության առաջացման պատճառ N 1:** Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ում նշված «Հատկանիշները (տեխնիկական բնութագիր)» դաշտում 1-ին չափաբաժնի մասով անհրաժեշտություն է առաջացել փոփոխություն կատարելու:

**Փոփոխության նկարագրություն:** ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/134 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի Հավելված 1-ում նշված «Հատկանիշները (տեխնիկական բնութագիր)» դաշտում 1-ին չափաբաժնի մասով անհրաժեշտություն է առաջացել փոփոխություն կատարել և տեխնիկական բնութագրերը շարադրել հետևյալ կերպ «...«Շինարարության իրականացում»-2 դաս լիցենզիա՝ բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ, ջերմագազամատակարարում և օդափոխություն (օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր, ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգեր) ներդիրով »:

**Փոփոխության հիմնավորում:** «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Վ. Վարդանյան:

Հեռախոս՝ +374 98 389 689 (ներքին հեռախոսահամար՝ 08)
Էլ. փոստ՝ v.vardanyan@promotion.am
Պատվիրատու՝ Մեծամորի համայնքապետարան